

Անտառագիտ

Հայ կանոնական իրավունքի ձևավորման գործում իրենց անգնահատելի դերն են կատարել Հովհաննես Բմաստասերը, Դավիթ Ալավկատրդին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին և ուրիշներ:

Հովհաննես Բմաստասերը մի ժողովածուի մեջ հավաքեց գոյություն ունեցող եկեղեցական կանոնները և կազմեց «Կանոնագիրք Հայոցը»:

Դավիթ Ալավկատրդին ստեղծեց մի «Կանոնական օրենսդրություն», որի կանոնները կողիֆիկացված իրավունքի առաջին փորձն էին:

Ներսես Շնորհալին միջնադարի հայ խոշորագույն մտածողներից էր ուս հասարակական-քաղաքական գաղափարները խոր հետք են թողել հետագա դարերի համար և պահպանել են իրենց արժեքը մինչև մեր ժամանակները:

Ներսես Լամբրոնացին կատարել է թարգմանություններ հունա-բյուզանդական օրենսգրքերից և այն համապատասխանեցրել Կիլիկյան հայկական պետության իրականության նոր պայմաններին:

Բանալի բառեր` կանոնական իրավունք, օրենսդրություն, Ներսես Շնորհալի, Դավիթ Ալավկատրդի, Հովհաննես Բմաստասեր, Ներսես Լամբրոնացի:

Հայ ժողովրդի իրավական ժառանգության մեջ մինչև 12-րդ դարը չենք հանդիպել աշխարհիկ օրենսգրքերի կամ օրենսդրական ակտերի ժողովածուների, այլ մեզ են հասել կանոնագրքեր, սուրբ հայրերի կողմից ընդունված կանոնական սահմանումներ և որոշումներ:

«Հայ կանոնական իրավունքը ձևավորվել է դեռևս 4-րդ դարից սկսած, որի Երևան գալը պայմանավորված է քրիստոնեության հետ» նշում է Գ.Մաֆարյանն ու Հ.Խաչատրյանը:[1]

Հայոց պետականության անկումը խանգարեց աշխարհիկ օրենսդրությունների ստեղծմանը, որի փոխարեն ձևավորվեց և զարգացավ հայ կանոնական իրավունքը: Այդպիսի պայմաններից ելնելով` հայ եկեղեցին իր ձեռքում կենտրոնացրեց օրինաստեղծ և արդարադատության գործառույթը:

Կանոնական նորմերը ընդունում էին ընդհանրական եկեղեցու տիեզերական տեղական և ազգային ժողովները, նրանց երևելի առաջնորդները և, պատահական չէ, որ հայ կանոնական իրավունքը բաղկացած է երկու հիմնական մասերից` թարգմանված կամ փոխառված (ասորենից և հունարենից) և ազգային-եկեղեցականոնախմբեր:

Հայտնի է, որ Հայաստանում ազգային-եկեղեցական ժողովներին, սկսած 4-րդ դարի 50-60-ական թվականներից, մասնակցել են նաև աշխարհիկ տերերը: Այդ պատճառով էլ հայոց եկեղեցական ժողովներն իրենց նշանակությամբ համակարգված քաղաքական հաստատություններ էին:

Հայ կանոնական իրավունքի ձևավորման գործում իրենց անգնահատելի դերն են կատարել Արտիշատի (354), Շահապիվանի (444), Դվինի չորրորդ (698), Դվինի հինգերորդ (719),

Պարտավի (768), Միսի (1213) ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնախմբերը:

Հայ կանոնական իրավունքի ձևավորման և զարգացման երախտավորներից են Հովհաննես Իմաստասերը (Օձնեցի), Դավիթ Ալավկատրոյին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին և ուրիշներ:

Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Իմաստասերը, ով նաև հայտնի իրավագետ էր, կարողացավ մի ժողովածուի մեջ հավաքել գոյություն ունեցող եկեղեցական կանոնները՝ կազմելով «Կանոնագիրք Հայոց» հանրահայտ աշխատությունը, որն առաջինն էր համաշխարհային իրավագիտության պատմության մեջ՝ հարյուր տարի առաջ ստեղծվելով, քան Բսիդորոս Մերկատորի կանոնական ժողովածուն և Հայաստանում գործեց 12 դար շարունակ, մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում:

Նրա որոշ նորմեր կիրառվել են նաև հայկական գաղթօջախներում:

Հովհաննես Իմաստասերը մեծ հայրենասեր էր: Նա իր կատարած գործով նպատակ է ունեցել վերականգնել հայ ժողովրդի միասնությունը, ամրապնդել հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու պահպանությունն, ինչպես նաև հասարակության տարբեր խավերի, ուժերի համախմբումն ու պայքարը ընդդեմ արտաքին թշնամիների:

Հովհաննես Իմաստասերի հետևորդները շարունակեցին նրա գործը, այն հարստացնելով նոր կանոնախմբերով: 24 կանոնները հասցվեցին 40-ի 17-րդ դարում՝ 98 կանոնախմբերի:

Արդեն 10-րդ դարում կանոնագրքի մեջ մտցված էր նաև Արցախի Վաչագան արքայի «Կանոնական Սահմանադրությունը»:

Կանոնագիրքը կարգավորվել է ոչ միայն եկեղեցական, այլև քրեական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան բնագավառների բազմաթիվ հարաբերություններ:

Հայ ժողովուրդը IX դարի 2-րդ կեսին կարողացավ վերականգնել իր երկրի պետականությունը: Բագրատունյաց թագավորության սահմանները տարածվեցին մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթան: Գագիկ I-ի թագավորության օրոք (997-1020թթ.) Արցախ և Ուտիք նահանգների հիմնական մասը մտնում էին Բագրատունյաց թագավորության կազմի մեջ:[2]

Բագրատունյաց թագավորությունը գոյատևեց ընդամենը 158 տարի և, չկարողանալով դիմակայել թուրք-սելջուկյան հրոսակախմբերին, դադարեց գոյություն ունենալուց:

Ճիշտ է, հայ ժողովուրդը զրկվեց պետականությունից, բայց չկորցրեց իր պետական մտածողությունը: Նման պայմաններում հայ ժողովուրդը Հայոց Կանոնագրքից ավելի խոշոր օրենսգրքի կարիք էր զգում: Ինչպես իրավագիտորեն նշում է հայ իրավունքի նշանավոր մասնագետ Խ. Սամուելյանը Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և սոցիալական պայմանները սուր կերպով թելադրում էին կատարել այդ քաղաքական քայլը՝ հորինելով հայկական օրենսգիրք, որի անհրաժեշտությունը զգացվում էր վաղուց և անորոշ արտահայտություններով դեգերում էր տիրապետող հասարակական դասերի գիտակցության մեջ:[3]

Այդ վճռական քայլը կարողացավ կատարել ազգային առաջին օրենսգրքի հեղինակ Դավիթ Ալավկատրոյին: Ժամանակակիցների վկայությամբ նա եղել է զարգացած անձնավորություն, տիրապետել է մի քանի լեզուների: Նա ունեցել է վարդապետի կոչում:

Դավիթ Ալավկատրոյին ստեղծել է մի աշխատություն, որը կոչվել է «Կանոնական օրենսդրություն»: Աշխատության վերաբերյալ առաջին կարծիքները եղել են բացասական (Հ. Տաշյան, Ս. Չամչյան) ըստ որոնց՝ Դավթի կանոնները մեծ մասամբ «խառնիխուռն» և անիմաստ բաներ են: Սակայն XX դարում վերաբերմունքը փոխվեց:

Պրոֆեսոր Խ. Սամուելյանը գտնում էր, որ «Հայաստանում որոշ կիրառում ունեցավ այդ ժողովածուն և այն պետք է դասել ազգային դատաստանագրքերի շարքին, իբրև կողիֆիկացիոն աշխատանքի մի փորձ, թեև կատարված անհատական ձեռներեցությամբ»:[4]

Այդ աշխատությունը շատ ջանասիրությամբ ուսումնասիրել է Հայաստանի պետության և իրավունքի պատմության խոշոր մասնագետներից մեկը՝ Ա. Սուքիասյանը, ով իրավացիորեն գտել է որ «Դավիթ Դատաստանագիրք»-ն առաջին հայկական օրենսգիրքն է, որը պարունակում է ինչպես եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենքներ:[5]

Այդ աշխատությունը դեռևս որևէ մեկի կողմից լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել, և յուրաքանչյուր հետազոտող այդ աշխատությանն անդրադարձել է այնքանով, որքանով որ այն առնչվել է իր կողմից ուսումնասիրվող առարկային: Սակայն իրականում Դավիթ Ալավկատրոյին ունի շատ առաջադեմ մտքեր ու գաղափարներ, որոնք նորություն էին միջնադարյան հայ իրավունքի համար և որոնք նույնիսկ ներկա պայմաններում իրենց արդիականությունը չեն կորցրել:

Դավիթ Ալավկատրոյ «Կանոնական օրենսդրությունը» կամ «Կանոնադրությունը» կազմվել է մոտավորապես 1130 թվականին: Այն առաջին անգամ աշխարհաբար լույս է տեսել «Էջմիածին» ամսագրում, իսկ անգլերեն թարգմանությամբ 1961 թվականին Բելգիայում հրատարակվել է հայտնի հայագետ Չարլզ Դոուսթի կողմից: Այդ մասին նշում է պրոֆեսոր Ռ. Ավագյանը:[6]

Դավիթ Ալավկատրոյն խորոպես մտահոգել է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդիրը: Աշխատության «նախադրության» մեջ և 97 կանոններում արտահայտել է իր իրավաքաղաքական հայացքները:

Նա անդրադարձել է ամուսնաընտանեկան, քաղաքացիական, աշխատանքի պաշտպանության, ավատատիրական օրինականության և քրեա-իրավական հարցերին:

Ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող 25 կանոնները, որոնք հիմնված էին կանոնական և սովորութային իրավունքի վրա, անդրադառնում են ամուսնության պայմաններին ու կարգին, ամուսինների փոխհարաբերություններին, ամուսնալուծության և հարակից այլ հարցերին:

Ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմերում բացակայում են ամուսինների, ծնողների և զավակների գույքային հարաբերությունները, խնամակալությունը, հոգաբարձությունը և որդեգրումը կարգավորող կանոնները: Ամուսնաընտանեկան կանոններում Դավիթ Ալավկատրոյին առաջ է քաշել այնպիսի առաջադիմական գաղափարներ, ինչպիսիք են ամուսնացողների փոխադարձ համաձայնությունը, անհիմն ամուսնալուծությունների արգելումը, երեխաների անվճար ուսուցումը, աշխատանքի պաշտպանությունը, որոնք նորություն չէին հայ իրականության մեջ և այսօր էլ դրանք տեղ են գտել մեր ընտանեկան օրենսգրքում:

Ալավկատրոյին, անդրադառնալով հանցագործություններին, ժխտում է չար արարքի գոյության գաղափարը:

Որոշ կանոններ հանցագործության սուբյեկտ են ճանաչում որոշակի տարիքի հասած մեղսունակ անձին: Կանոններում նշված են մեղքի ձևերը դիտավորություն, անզգույշ և խառն:

Պատիժ նշանակելիս Ալավկատրոյին հաշվի է առնում մի շարք մարդասիրական սկզբունքներ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Հայ կանոնական իրավունքի զարգացման գործում մեծ դեր է կատարել նաև Կիլիկյան Հայկական Թագավորության նշանավոր և հեղինակավոր գործիչներից մեկը՝ Ներսես Շնորհալին:

Հատկապես շատ արժեքավոր իրավական գործ է նրա «Թուղթ ընդհանրականը»: Այն միջնադարյան կանոնական և հրապարակախոսական արժեքավոր ստեղծագործություններից է: Եվ ինչպես իրավագիտորեն նշում է Է. Բադդասարյանը «Այն ոչ միայն բարոյակրթական նշանակություն է ունեցել բազմաթիվ սերունդների համար, այլև հաստատորեն եղել է տեսակը սկզբնավորող երկերից մեկը՝ նպատակ ունենալով կանոնավորել հասարակության ներքին կյանքը, միջնադարյան ըմբռնողություն դարձնել տարբեր դասերի հարաբերությունները, եկեղեցու շուրջը նրանց ավելի սերտ համախմբումը և ժողովրդի կենցաղի ու բարքերի մաքրության ապահովումը»:[7]

Այս աշխատությունը՝ որպես օրենսդրություն, մեծ նշանակություն է ունեցել հայ իրականության մեջ ողջ միջնադարում և պատահական չէ, որ տարբեր ժամանակներում այն պարբերաբար արտագրվել, բազմացվել ու տարածվել է հայկական համայնքներում:

Շնորհալին, խիստ քննադատության ենթարկելով հասարակության բոլոր խավերին ու դասերին, մերկացնելով նրանց արատներն ու թերությունները և դրանց վնասակար հետևանքները, ձգտում տալ այդ ամենից ազատվելու ճանապարհները:

Ներսես Շնորհալին պաշտպանելով հայոց եկեղեցին, դավանանքը, դրանով իսկ պաշտպանել է հայոց պետականությունը, պատիվը, հեղինակությունն ու քաղաքական անկախությունը:

Հայ կանոնական իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում ունի Ներսես Լամբրոնացին: Նա հայտնի հասարակական-քաղաքական գործիչ էր և իրավագետ: Կատարել է թարգմանություններ հունա-հռոմեական օրենսգրքերից, բայց ոչ թե մեխանիկորեն թարգմանել է այդ օրենքները, այլև խմբագրել և որոշակիորեն համապատասխանեցրել է Կիլիկյան Հայկական պետության, հասարակության պայմաններին ու պահանջներին, որի արդյունքում թարգմանված օրենքները ձեռք են բերել նոր հնչեղություն և նշանակություն:

Լամբրոնացին գտնում էր, որ աշխարհիկ իշխանության տերերը պետք է զբաղվեն հասարակության վարչական, տնտեսական և այլ գործերով, իսկ հոգևոր իշխանությունը պետք է կարևորի և կառավարի ժողովրդի հոգեկան գործերը՝ հավատը, բարեպաշտությունը և բարեկրթությունը:

Քննարկելով թեման՝ գալիս ենք այն եզրակացության, որ հայ կանոնական իրավունքը հետագայում աղբյուր է հանդիսացել հայ իրավունքի զարգացման գործում: Այն ժամանակ, երբ հայերը պետականություն չունեին և չունեին հայկական աշխարհիկ օրենսգրքեր, առաջնորդվում էին կանոնական իրավունքով: Այն կարգավորել է բոլոր հասարակական և քաղաքական հարաբերությունները, նպաստել հայ ժողովրդի գոյատևմանը և հայոց պետականության վերականգնմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մաֆարյան Գ., Խաչատրյան Հ., Հայ իրավունքի հուշարձաններ (V-XVIII դդ.), Երևան, 1994, էջ 6:
2. Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր առաջին, Երևան, 1994, էջ 442:
3. Մամուլեյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 74:
4. Մամուլեյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 75:
5. Մուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դդ.), Երևան, 1978, էջ 227:

6. Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, հատոր երկրորդ, Երևան, 2001, էջ 192-244:
1. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրության, Բաղդասարյան Է., Երևան, 1995, էջ 5:

РЕЗЮМЕ

О значении Армянского канонического права Асмик Григорян

Ключевые слова: каноническое право, Давид сын Алавика, Оганес Имастасер, Нерсес Шнорали, Нерсес Ламбронати

В деле формирования армянского канонического права свою бесценную роль сыграли Оганес Имастасер, Давид сын Алавика, Нерсес Шнорали, Нерсес Ламбронати и другие.

Оганес Имастасер собрал в один сборник все существующие церковные каноны и создал «Армянскую канонную книгу».

Давид сын Алавика создал «Каноническое законодательство», каноны которого были первым опытом кодифицирования армянского права.

Нерсес Шнорали - крупнейший мыслитель армянского средневековья, чья общественно-политическая мысль оставила неизгладимый след в последующих веках, сохраняя свою ценность и для нашего времени.

Нерсес Ламбронати переводил греко-византийские законы, отредактировал их в соответствии с новыми условиями действительности Киликийского армянского государства.

SUMMARY

About the Importance of Armenian Canonical Right Hasmik Grigoryan

Keywords: Canonical right, legislation, Nerses Shnorhaly, Hovhannes Imastaser, David son of Alavik, Nerses Lambronatsi.

Hovhannes Imastaser, David, the son of Alavik, Nerses Shnorhaly, Nerses Lambronatsi and others did much in the formation of Armenian Canonical right.

Hovhannes Imastaser collected into one collection all the ecclesiastical canons and created the “Armenian Canonical book”.

David, the son of Alavik, created “Canonical Legislation” the canons of which became the first attempt to encode the Armenian right.

Nerses Shnorhaly is one of the greatest thinkers of Medieval Armenia whose political and social mind put its irrefutable imprint on the next centuries thus preserving its value for our times as well.

Nerses Lambronatsi had translated the Greek-Byzantine legislation, had edited them and corresponded them to new conditions of reality of the Cilician Armenian State.